բողջ պատմական Սյունիքը։ 1823 թվին նա ներկայացված էր մինբաշի մելիք Պողոսով[19]։

Բռնակոթում նստող մահալական մելիքները նույնպիսի հնությամբ սրբագործված իրավունքի վրա էին հիմնում իրենց ժառանգական իշխանական արտոնությունները։ Մելիք Թանգյանները իրենց տան հիմնադիր համարում էին Անիում զորավարություն արած ոմն մելիք Ստեփանի, որը տեղափոխվելով այս կողմերը, ստացել է Սարդար տիտղոսը[20]։

Համենայն դեպս պատկառելի հնություն կարող էին վերագրել իրենց տանը և մելիք Սաֆրազյանները, որոնք 1699 թ. իրենց մոտ էին հավաքել Զանգեզուրի մելիքներին Իսրայել Օրու ծրագրին ծանոթանալու համար։ Թեև նրանց տան ներկայացուցիչը չի հիշվում Մոգիլևսկու և Երմոլով 2-ի մահալական մելիքների ցուցակի մեջ, սակայն Անգեղակոթի երբեմնի այս կառավարիչները պետք է որ արդեն XIX դ. առաջ փոխադրված լինեին Սիսիան (Սիսավան-Ղարաքիլիսա) որպես տեղական, մասնավոր մելիքներ, քանի որ այնուհետև նրանց այդտեղ ենք գտնում՝ բավական ճաշակով շինած տան մեջ նստած[21]։

Այդ ցուցակի մեջ հիշատակված ոչ մահալական, այլ առանձին գյուղերի կամ գյուղախմբերի մելիքները երկրորդական դեր էին խաղում մահալական կազմակերպության մեջ։ Նրանք իրենց ծագումը կապում էին ոչ թե հին ժառանգական իրավունքի, այլ խանի բարյացակամության և շնորհքի հետ։ Այսպես՝ Տաթևի մահալի Գորիս գյուղում կառավարող մելիք Հարությունը Հուսեյինյանների ցեղից էր, որը ըստ ընդհանրական ավանդության առաջացել է խոջա (առևտրական) Լալայից։ Այս Լալայի թոռին՝ Օհանին գորիսեցիք Ղարաբաղի Փանահ-խանի համաձայնությամբ նստեցրել էին իրենց և հարևան գյուղերում մելիք[22]։ Նույնպիսի նորագույն ծագում է վերագրվում նույն մահալի Խնձորեսկ գյուղում 1823 թ. կառավարող մելիք Հուսեյին-Ալիին։ Այս կարգի մելիքներից կային և թուրքերի մեջ։ Օրինակ՝ Գեղի գյուղում նստած էր մելիք Ալլահ-Ղուլին, որն իր գյուղացիների հետ 1823 թ. նոր էր Ղարադաղի Աբուլ-Ֆեթ-խանի մոտից փոխադրվել Զավնդուր գետի ձախ ափը և բնակություն հաստատել Բաղաբյուրտ մահալում։ Թուրքական բնակչության մեջ մելիքական պաշտոնի առաջ գալը կարող է նկատվել որպես մեկն այն երևույթներից, որոնք ցույց են տալիս հարևան հայերի և առհասարակ տեղական հին կուլտուրական էթնիկ շերտի արդեն լայն ծավալ ստացած ազդեցությունն ասիական միջնաշխարհից շատ ուշ ներթափանցած նոր էթնիկ շերտի վրա։

Էնդեմիկ և նորամուտ էթնիկ տարրերի վեցդարյան համակեցությունը խոշոր փոփոխություններ էր առաջացրել թե մեկի և թե մյուսի և՛ տնտեսա-

---

[19] Այս տան վերջին ներկայացուցիչ Խուդաբաշխի-բեկին մեր 1931 թ. գիտարշավը գտավ Տաթևում արդեն մերձիմահ վիճակի մեջ։ Նա ծնվել է 1819 թ. ուրեմն արդեն 112 տարեկան էր։ Նա մելիք Մանուչարի որդին էր։ Մելիք Մանուչարը հաջորդել էր իր հայր մելիք Օսեփին, որին իշխանությունն անցել էր իր հայր Մուսայից, անժառանգ մեռած մելիք Պողոսի եղբորից (կենդանի էր Մոգիլևսկու և Երմոլով 2-րդի այցելության ժամանակ)։ Խուդաբաշխի-բեկի ասելով՝ Մանուչարը գրելիս է եղել իր ժամանակի Տաթևի անց ու դարձը և պահում էր իր մոտ Դավիթ-բեկի մասին մի ձեռագիր պատմություն, որը Խուդաբաշխի-բեկի մոտից խուզարկության միջոցին տարել է Բախշի Ղարաղշլաղեցին։

[20] Լալայեան Ե., Սիսիան, էջ 16—19։

[21] Այս տոհմից Զիլֆիղար-բեկը Արշակ-բեկ մելիք-Թանգյանի հետ 1905 թ. սպանվել է Եռաբլուր (Ուչթափալարի) դաշտում թուրքերի ձեռքով, որոնք պատահելով նրանց՝ վրեժխնդիր էին եղել իրենց մոտից բռնակոթցի հայ գյուղացիների քշած ոչխարների համար։

[22] Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 8—14։